


Հնչիւնաբանութեանն ու ձեաբանութեանը, այլ և բառերն  
էլ թարգմանում են։ Այս պատճառով երբեմն և ոտա-  
նաւորն ամրող կերպարանափոխ է լինում։ Միւս կողմից  
այն բառերը, որ վատ են լուսում, կամ մի բարբառի մէջ՝  
շմարդմանուելով անհասկանալի են մնում, երբեմն այն-  
պէս խեղաթիւրում են, որ անմտութիւններ են միայն  
առաջ բերում, օրինակ՝ Այ՛ հետա, հետա, սիրս տողը  
դառնում է՝ Այ՛ եւա, եւա, սիրս, կամ Այ ով ա, ով ա  
սիրս։ Կեռ ունքեր դառնում է՝ կեռ ընքեր, կեռ ընքներ,  
և վերջը կոընկեր, կոնկներ են, որ անհեթեթութիւն է։

Խաղերի փոփոխութեան ուրիշ շատ տեսակներ ևս  
կան, որ չենք ուզում յիշել ընթերցողին չձանձրացնելու  
համար։ Խուսափեցինք մանաւանդ շատ օրինակներ կու-  
տակելուց, մէջ բերելով միայն մի խաղի այս տասնումէկ  
վարիանտները, որ մեզ յայտնի են և որ, կարծում ենք,  
բաւական են։ Ներքեւում ուրիշնկատմամբ բերած օրինակ-  
ները մասամբ և այս աղճատման կողմին են վերաբերում։

(Կը շարունակալի),

Մ. Աբեղեան,



## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

### ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Խմբագրութիւնու ստացաւ հետեւեալ գրքերը։ —

ա. Քարք երգում է. Կովկասեան Ա. գենդարա. վոխագրութիւն  
3. Գուրբախեանի, հրատարակութիւն տիկ. Զարելի։ Գրքոյնը  
հրատարակուած է ժողովրդական ընթերցանութեան համար,  
տպագրութիւնը մաքուր է, լեզուն սահուն և բովանդակու-  
թիւնը խիստ խրատական—մեծ գործերը պահանջում են մեծ

աշխատանքը, հասունանում են գարերի ընթացքում և այդ գործերին ձեռնարկողների և նրա համար աշխատադիների համար համարեա գոյութիւն չունի իրենց դադախարաւազից դուրս՝ մի այլ տշխարհ։ Գերբը բաղկացած է վաթուն և չորս փոքրագեր երեսից և արժէ ընդամենը 10 կոպէկ, որ միանգամայն մոտէլի և համապատասխան զինէ։

ը. Լուսաբեր, գրական հաւաքածու է լիշտատել ո. Եջմիածնի հաղար վեց հարիւր ամեակի պրակ ա. Նիկոսիա (Կիպրոս կղզու վրայ) տպարան ազգ կրթացան—որբանոցի 1903 թ. գինն է  $2\frac{1}{2}$  դրշ. եղիպակական։

Լուսաբերի ա. պրակը ժողովածու է մի շարք յօդուածների։—

1. Ա. Եջմիածնի հիմնարկութիւն։

2. Պատմական նկատողութիւններ։

3. Հայոց եկեղեցական ժողովոց ժամանակադրական ցանկը։

4. Մեծն Տրդատի վերահասաւատելիլ Հայաստանի դաճին վրայ. թարգմանութիւն Եղուարդ Գիրոնի հռովմէական պատմութիւնից։

5. Հղոր, քաջ և առաքինի Տրդատ թագաւորի մահը. մի հասուած, զոր դաճ է հայր Ղետի Ալիշան և զոր կենթազրէ լինել Մովսէս Խորենացու չորսորդ գըքին մասը։

6. Մի հատուած ձեռագիր Ագաթանգեղոսից։

7. Սրբոյն Գրիգորի ելն ի միքապէն, և այլն։

Լուսաբերի առաջին պրակը պէտք է առել, որ կաղմուած է բաւական խնամքով և բաւարար ծանօթութիւն է տալիս հնագրեան հիմնարկութեան նշանաւոր հիմնադիրների և նրանց պատմական անցեալի մասին, ափսոս որ տպագրութիւնը յաւ չէ և ըրդիտենքինչ նպատակաւ մուտք է դործել խնդրի հետ և ոչ մի կապ չունեցող «Յիսուսեան ընկերութիւն» վերնագրով յօդուածը, որը տեղ չըդէտք է ունենար ո. Եջմիածնի 1600 տմեակին նուիրուած պրակի մէջ։

գ. Ծրագիր կենաց, աշխատասիրեաց Ակրովէ վարդապետ Թալուացի, ի միաբանութենէ ա. Երուսաղէմի; Կ. Պօլիս, 1903 թ. փոքրագեր 168 էջ. գինն է 5 դրշ.

Գերբը ժողովածու է կոկապէս ընտիր մտքեսի, բայց պահապում է ամենագլխաւորը. մինչդեռ ժողովողի բաւականին ընդարձակ ինքնակենսագրութիւն կայ նրա մէջ, կարեւոր չի համարուած իւրաքանչիւր մտքի հեղինակի անուան և ո՛ր աշխատութեան մէջ յիշակալուած լինելն առաջ բերելու խնդիրը, որով դիրքն անշուշտ աւելի արժէր կըստանալ։ Խոկ ներկայ

դրութեամբ մի օրացուցական ժողովածու է այլ և այլ անձանց մաքերի՝ գառակարգերի բաժանած՝ մեծադղորդ «ծրագիր կենաց, վերնագըի տակ»:

Դործարան թէ երկրազործութիւն, թէ Յուղուղեանի, Յարդելի բժիշկն իւր ժողովրդական քսան և վեց գրքոյներով արդէն յայտնի է հայ ժողովրդի խաւերին և արժանի համակըռութիւն վայելում:

Ներկայ գրքոյկը 27-դն է, մաքուր հրատարակուած, մատչելի գնով, նուիրուած մեր կեանքի ամենաէական և կենսական մասերի.—քննումութւում է գործարանի վնասակար ազգեցութիւնը մարդուս ֆիզիքական, քարոյական, նիւթական կեանքի վրայ և ցոյց տալիս երկրագործութեան առաւելութիւնն ամեն կողմեց: Ցոյց է տալիս, թէ գործարանական կեանքն ամենից շատ զարգացած երկերներում՝ ինչպէս են բանւորները գործարանից կրկին գիւղ վերադառնում: Յարդելի լժիշկն առաջարկում է բարեփոխել գիւղն ու քաղաքը, խելացի աշխատանք սկսել՝ վոխադարձ ովրոյ հետ, որը միայն կարող է փրկել մեղ, հակառակ դէպքում՝ եսական կեանքի և ծուլութեան արգենքը կլինի մի միայն վաղաժամ այլասեռումն ու մահը:

Գիւղատնտեսական գրադարան: Գ. Մեծատուրեանցի. «Ընտրութիւն կաթնատուների» պատկեթազարդ, 40 էջ. գինն է 15 կոպէկ.

Գրքոյկը մի սիրուն հրատարակութիւն է և մեր դիւղատընտեսական կարերներից մինին նույնուած: Միանգամայն ցանկալի է այսպիսի գրքոյների տարածումն ու ժողովրդականացումը, որովհետեւ նըանք անշնուշտ կընպասաեն մեր գիւղատնտեսութեան զարգացման զործին: Մենք խորհուրդ կըտանք մեր գրադէտ գիւղացիներին՝ ձեռք բերել յիշեալ գրքոյկը և գործածել երբեւ ձեռնարկ կաթնատուներ ընտրելիս, որոնց ոերունդը կովկասում զարմանալի մանրացած է:

Խմբագրութիւնս ստացաւ նաև հետեւեալ գրքերը.—Ժողովածու «Ատրպետի» երկերի հատոր առաջին, տպագրուած թաւրիզում.

Մի տեսութիւն կելլիկոյ Հայկական կշխանութեան վրայ։ գրեց Բակուբան, տպագրուած նիկոսիայի աղդ, կըթարան որբանոցի տպարանում։

«Կեանքը առանց հաւատի»: Ժողովրդական քարողներ, գրեց ներսէս վարդապետ Դանիէլեանց միաբան Սսական վա-

Հուց. համար առ. Վեհնսա միկթարեան տպարան 1903թ.  
Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des  
Babratidernreiches. Nach arabischen und armenischen Quellen.

Գոբար Մկրտիչ Վազարեանի գիտերացիան. Marburg 1903

Ж. Ж. Руссо и воспитание естественное Комиере. переводъ  
П. Д. Первова, преподавателя Лазаревскаго института восточ-  
ныхъ языковъ. Москва 1903 г. цѣна 40 коп.

Записи Кавказского отдѣла Императорскаго Русскаго  
географическаго общества книжка ХХIV выпускъ З-й. В., Ду-  
бянскій О горныхъ Породанъ Казбека. цѣна 30 коп. Тифлисъ  
1904 г.

Протоколъ засѣданія Императорскаго Кавказскаго Меди-  
цинскаго Обществы. № № 10, 11 и 12.

Գրքերից մե քանիսի ըսվանդակութեան մասին կը լուսնաբ  
հետեւեալ համարում:

